ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանրային քննարկում

2026 թ. օգոստոսի 10
Ժամը՝ 11:00 – 13:00
Կառավարական տուն 2, ք. Երևան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Թեմա՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքում գտնվող հողամասի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին»

Քննարկմանը մասնակցում էին՝

- Սպորտի քաղաքականության վարչության պետ՝ Նարինե Շահբազյանը:
- Սպորտի քաղաքականության վարչության պետի տեղակալ՝ Դավիթ Բաղումյանը:
- Կազմակերպատնտեսական վարչության փորձագետ՝ Մարո Կարախանյանը
- Մարզական կազմակերպությունների համակարգման բաժնի պետ՝ Հարություն Եղոյանը (ՔԱՐՏՈՒՂԱՐ):
- Կապանի համայնքապետի տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը:
- Կապանի համայնքապետարանի ճարտարապետնի գլխավոր մասնագետ՝ Արշամ Սարգսյան:
- Իրավաբանական՝ Դավիթ Ասատրյան:
- «Գանձասար» ֆուտբոլային ակումբի ներկայացուցիչ՝ Վլադիկ Առաքելյան:
- Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի երիտասարդական խորհրդի Հայաստանի Հանրապետության լողի ազգային հավաքականի անդամ՝ Ռուբեն Ղամբարյան
- Քաղաքացիներ՝ Գառնիկ Օհանջանյան, Լիլիթ Տոնոյան, Էրիկ Թելունց, Հայկ Զալիբեկյան:

ՆԱԽԱԲԱՆ

2026 թվականի օգոստոսի 19-ին ժամը՝ 11:00-ին կայացել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 6-ի N 852-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի

մարզի Կապան համայնքի Կապան քաղաքում գտնվող հողամասի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթի վերաբերյալ ներկայացված դիտարկումների և առաջարկությունների նիստը՝ ներառելով նաև գերատեսչություններից ստացված հիմնական հարցերը:

Զեկուցող՝

- Նարինե Շահբազյան՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սպորտի քաղաքականության վարչության պետ:

Քննարկվեց՝ 1. Նախագծի նպատակներն ու ակնկալվող արդյունքները:

2. Անդրադարձ կատարվեց մարզական համալիրի կառուցման համար անհրաժեշտ տարածքին, ենթակառուցվածքներին, գույքային և իրավական հարաբերություններին:

3. Կառավարման հնարավոր մոդելները՝ պետություն-համայնք համագործակցության սկզբունքով:

4. Հավելվածում ներառված հողամասի վերաբերյալ տեղեկատվությունը:

Առաջարկվեց՝

1. Համալիրի կազմում ներառել թեթև աթլետիկայի ենթակառուցվածքներ՝ մասնավորապես վազքուղիներ, ցատկային հատվածներ և մարզումների իրականացման համար անհրաժեշտ այլ հնարավորություններ՝ ապահովելով դրանց համապատասխանությունը մարզական գործունեության պահանջներին:
2. Ընդգծվեց մարզադաշտի՝ ՈՒԵՖԱ-ի չափանիշներին համապատասխանության անհրաժեշտությունը՝ միջազգային հանդիպումների կազմակերպման նպատակով:
3. Կադաստրի կոմիտեին դիմել և ստանալ թե ումն է պատկանում այդ հողը, իմանալ գնահատման արժեքները, որի հիմքով հնարավոր կլինի պատասխանել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության դիտարկումներին:
4. Նշվեց շահագրգիռ կողմերի հետ շարունակական համագործակցության և նրանց առաջարկների համակողմանի ուսումնասիրության կարևորությունը,

միևնույն ժամանակ քննարկման արդյունքում ի հայտ եկավ այն հանգամանքը, որ բացակայում է գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը և օտարվող սեփականությունը նույնականացնող բոլոր այլ հասանելի տվյալները:

Որոշվեց՝

1. Հավանություն տալ ներկայացված նախագծին՝ միաժամանակ լուծում տալ հանրային լսումների ընթացքում բարձրացված առաջարկներին ու դիտարկումներին՝ ապահովելով նախագծի հետագա ընթացքի կատարումը:
2. Նախագծի հաստատումից հետո կիրականացվի նախագծահաշվային փաստաթղթերի պատվիրում և քննարկում, որից հետո կտրվի ֆինանսական միջոցների նախնական գնահատական:
3. Ներկայացված բոլոր առաջարկները հաշվի կառնվեն նախագծահաշվային փաստաթղթերի մշակման փուլում:

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Մարզական կազմակերպությունների

համակարգման բաժնի պետ՝ Հարություն Եղոյան